

ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Ինչպէս նախորդ տարիներ, նոյնպէս և այս տարի առանձին հանդիսով կատարուեց մեր Երանաշնորհ Թարգմանչաց՝ Մեծին Սահակայ և Սրբոյն Մեսրոպայ, տօնախմբութիւնը:

Յուլիս 4-ի առաւօտեան՝ զիշերային ժամերգութիւնը Մայր Տաճարում աւարտելուց յետոյ, միաբանութեան անդամներէց ոմանք՝ Գեր. Յուսիկ, Բարդուղիմէոս և Ղեռնդեպիսկոպոսներ, և ճեմարանում մնացած բոլոր աշակերտները մեկնեցին դէպի Սշական գիւղը: Աշակերտներն ըստ իրենց սովորութեան մեծ թէ փոքր օտքով էին գնում Վաղարշապատից մինչև Սշական, ժամուկիսուայ կառքի ճանապարհը՝ առանց որ և է յոգնութեան, երգելով, վազվզելով:

Նորին Ս. Սծութիւն Վեհափառ Հայրապետը, որ մերս. Եկեղեցւոյ վաստակաւոր հարց և աշխարհաշէն տերանց յիշատակը պաշտօնն է և ըստ հնարաւորութեան մեծ շքով է կատարել տալիս նոցա տօները, այս տարի ևս ներկայ լինելով Մայր Աթոռում ս. Թարգմանչաց տօնին՝ փութաց ունկնդրել ս. պատարագին և հանդիսագիր լինել Սշականում: Պատարագիչն էր Արտավուդ ս. Թադէի վանուց վանահայր Տ. Գէորգ Ժ. վարդապետ, որ պաշտօնական գործով Մայր Աթոռում էր գտնուում: Պատարագից յետոյ կատարուեց ըստ սովորութեան հոգեհանգստեան կարգ, որից յետոյ դպիր Մաքսուդեան մի ճառ ասաց: Հաւաքուած էր Վաղարշապատից, Երևանից և շրջակայ գիւղերից մեծ բազմութիւն ուխտաւորաց:

Պատարագից յետոյ Վեհ. Հայրապետը միաբանութիւնը և աշակերտները գնացին Վանքի մեծ այգին, որ գիւղից դուրսն է գտնուում, ընդարձակ անտառով, Քասախ գետի բարձր ափանց վերայ, ուր և ուրախ և հաճելի ճաշկերոյթ տեղի ունեցաւ:

Երեկոյեան ժամը հինգին Նորին Սրբութիւնը հրաժեշտ տալով միաբանից, ձիով ուղևորուեց դէպի Բիւրական ամալանոց՝ հետը տանելով Տ. Կարապետ վարդապետին:

Օրհնեալ լինի յաւէտ երջանկաւառ Տ. Գէորգ Գ. Հայրապետի յիշատակը, որ ի թիւս այլ բարեկարգութեանց կառուցել է արդի հոյակապ եկեղեցին, մաքուր սրբատաշ քարից, ս. Մեսրոպի շիրմի վերայ՝ նուիրատուութեամբ և օժանդակութեամբ Հայոց Ռուսաստանեայց Յիշեցի յաւէտ և նախանձաւորութիւն հայրենասիրութեան արդի Մեծ Հայրապետիս, որ իւր գահակալութեան առաջին տարուանից իսկ սկիզբ դրաւ և հաստատեց տարեկան հանդիսաւոր տօնախմբութիւն Օշականում՝ մասնակցութեամբ Ս. Էջմիածնի միաբանութեան և ձեմարանի սանուց, զտրթեցնելով գիւղական ժողովրդեան մէջ գիտակցութիւն դէպի իւր բարեբար սուրբերն ու երախտաւորները:

Իսկապէս բաղդաւոր է ս. Մեսրոպ իւր փառաւոր դամբարանով և հոյակապ տաճարով: Ս. Էջմիածնի մերձաւորութիւնը նպաստում է, որ նորա շիրմը հիացման և պաշտամունքի տեղ լինի բազմաթիւ ջերմեռանդ հայերի համար: Նորա աւրնթեր վահան մեծ իշխան Ամատունւոյ, Օշականի կալուածատիրոջ և Հայոց հազարապետի՝ գերեզմանն ևս, որ անշուք գեանափոր խրճիթ էր, այժմ իւր վերայ ունի հոյակապ մի արձան, նոյնպէս սրբատաշ քարերից՝ կանգնեցրած ներկայ վահանաւ Հայրապետի հրամանով և ծախիւք:— Իսկ որքան անշուք է շիրմը և դամբարան այն մեծ Հայրապետին Ս. Սահակ Պարթևի՝ Տարօնի (Մուշ) դաշտի մէջ, այդ նախնի փառթամ Աշտիշատում, այժմ իսպառ աւերակ՝ ոչ տօն ունի տարեկանաց, ոչ խունկ խնկելի մարմնոյն, ոչ ձէթ օծեալ շիրմին, ոչ լոյս լուսատու գերեզմանին:

Վարդապետի մեծ տօնը (Յուլիս 21) Մայր Աթոռում կատարելուց յետոյ, Նորին Սրբութիւնը երկրորդ օրը ճանապարհ ելաւ ձիով դէպի Դիլիջան և Հաղարծնի վանքը: Առաջին գիշերը անցկացրեց վանքապատկան Եղուարդ գիւղում, ուր

տարաձայնութիւն կար ժողովրդի և գիւղի կապալառուներէ մէջ, և վերջացաւ Նորին Սրբութեան վճռական կարգադրութեամբ: Երկրորդ գիշեր Նորին Սրբութիւնը հիւր եղաւ Պ. Առաքել Մատուրեանցին նորա նոր գնած կալուածքում՝ Արգաքան գիւղում, որտեղ կապգութեւնը եկել էր Պ. Մատուրեան: Երրորդ գիշեր անցկացրեց Դարաչիչազի Ռնդամալ գիւղում Տ. Միքայէլ քահանայի տան. թէպէտ և Նորին Սրբութիւնը յայտնել էր թէ գիշերը Դարաչիչազում կը լինի, սակայն ճանապարհին անձրևի և կարկուտի բռնուելով ձիու վերայ, մի քիչ տկար զգաց իրեն և հանգստացաւ Ռնդամալ գիւղում: Զորրորդ օրը գերադասելով լեռնային ճանապարհը փոստային փոշոտ ճանապարհից, առաւօտեան մեկնեց գիւղից և Թուրքերի հարկւրաւոր վրանների միջից, որոնք իրենց արօտավայրերն ունին Դարաչիչազի ծաղկաւէտ լեռների բարձանց վերայ, վեց ժամուայ դժուարանցանքի ուղիներով անցաւ և իջաւ ուղիղ դէպի Դիլիջան. նոյն օրը մեկնեց Հաղարծնի վանքը: Մնալով այնտեղ մինչև ամսի 28-ը, նոյն լեռներով, բայց այս անգամ տարբեր ուղիով՝ վերագարծաւ և գիշերեց Մաղիուհք գիւղում, և ամսի 30-ին մտնելով Դարաչիչազ, 31-ին այցելեց Երևանի Տ. Նահանգապետին: Նոյն օրը մեկնելով գիշերեց Ալափարս մեծ գիւղում՝ Բջնի գիւղի մօտ և օգոստոս 2-ին տասնևչորսօրեայ ճանապարհորդութիւնից յետոյ ողջամբ հասաւ ի Մայր Աթոռ:

Օգոստոսի 17-ին Նորին Սրբութիւնը չորրորդ անգամ ճանապարհորդեց, իւր հետն ունենալով իւր գիւանապետին, ինչպէս և նախորդ անգամները՝ այս անգամ երկաթուղով դէպի Ալէքսանդրապոլ: Հետևեալ օրը 18-ին Ս. Աստուածածնի Վերափոխման տօն լինելով և տեղւոյն Եօթն վիրաց ս. Աստուածածնի պատկերի յատուկ տօնախմբութիւն, որի պատճառով հաւաքուած էր զանազան քաղաքներից մեծ բազմութիւն, Նորին Սրբութիւնը ներկայ եղաւ ժամերգութեան և պատարագին. պատարագիչն էր գիւանապետ Կորիւն վարդապետ: Երեկոյեան այցելեց ս. Փրկիչ եկեղեցին և ներկայ եղաւ ժամերգութեան, և 19-ին առաւօտեան զնացքով մեկնեց դէպի Ղարաքիլիսայ գիւղը, որտեղ ս. Աբովեանցներէ

տան երկու ժամու չափ հանգստացաւ, և ապա փոստային կառքով մեկնեց դէպի Ղիլիջան և Հաղարծնի վանքը, և հանդիպելով Սեանի վանք, Երեան՝ նոյն ամսի 27-ին վերադարձաւ ի Մայր Աթոռս:

Հաղարծնի վանուց հինգ տաճարները, որոնք խալառ վշա-
ցած էին դարերի ընթացքում ամայի մնալուց՝ դրսի կողմից բոլորովին նորոգուեցին այս երկու տարուայ մէջ, թէ պատերը և թէ տանիքները, և յաջորդ ամառ կսկսուին շինուել վանահօր և այլ կացարաններ:

Կարիւն վարդապետ

Յուլիս ամսի 3-ին Մայր Աթոռ եկան Կիւմլի Ռուսաց Հոգևոր դպրանոցի մի խումբ աշակերտներ իրենց ուսուցիչներով և կրօնուսոյցներով և մի գիշեր հիւրընկալուելով Ս. Էջմիածնում և այցելելով Հոգևոր ճեմարան, թանգարան, մատենադարան և այլ տեղեր, մեկնեցին դէպի Անի:

Նոյն ամսի 27-ին Նորին Գերապատուութիւն Տ. Ղեոնդեպիսկոպոս, աւագ լուսարար Մայր տաճարի, սարկաւագութեան աստիճան տուաւ ճեմարանաւարտ երկու միաբաններին՝ դպիր Յարութիւն Մաքսուդեանին և դպիր Իսահակ Տ. Ղազարեանին, Ս. Գայիանէի վանքում:

Թեւեթի վանուց վանահայր և Մայր Աթոռի միաբան Բարեշնորհ Տ. Թադէոս վարդապետ Առիւծեանի հիւանդութեան պատճառաւ, նորա տուած հրաժարականը վեհ. Հայրապետի կողմից ընդունուելով, նորա տեղը վանահայր կարգուեց Բարեշնորհ Դիոնէսիոս վարդապետ Ղամադեան, նոյն վանքի նախկին վանահայրը:

Վեհափառ Հայրապետը ընդունելով Գորի քաղաքի Յա-
 ջորդ Բարեշնորհ Յովհաննէս վարդապետի հրաժարա-
 կանը, ազատ համարեց նորան իւր պաշտօնից և նշանակեց
 Շահնարաթի վանքի վանահայր, որի միաբան ձեռնադրուած
 է նա:

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Գալֆայեան ուրբանոց.— Կ. Պոլսի Խասգիւղ անուն արուար-
 ձանում, Հայոց դպրոցի հանդէպ, մի ընդարձակ պարտէզի մէջ
 կառուցուած է մի որբանոց, որի հիմնադիրն եղել է բարեյշա-
 տակ մայրապետ Սրբուհի Գալֆայեան: Սա կարծէք Ե. դարու
 անձնազոհ հայուհիների վերջին շառաւիղներից մին լինէր: 1866-ին,
 երբ նա հիմը դրաւ այդ հաստատութեան, աւելի իր ջանքերի,
 իր զոհաբերութիւնների վրայ էր վստահ քան մեծաքանակ գու-
 մարների, որ չունէր: Եւ սակայն հիմնեց նա այդ ազգային տու-
 նը՝ այնտեղ պատսպարելու համար անտերունչ հայ որբուհիներ,
 որոնց արտասունքին հանդուրժել չէր կարողանում: Նորան ա-
 ջակցեցան ժամանակակից պատրիարքն ու Հայ հատարակութիւ-
 նը՝ առաջինն իր շրջաբերականով, երկրորդը՝ նիւթական օժան-
 դակութեամբ: Սրբուհի մայրապետը դրաւեց և երկրի այն ժա-
 մանակուայ Վեհապետի ուշադրութիւնը, որի արդիւնքն եղաւ
 հացի և մսի ամենօրեայ նպաստ, որ մինչև օրս էլ ստացուում
 է: Որբերի թիւը հիմնադիր մայրապետի օրով բարձրացել
 է մինչև 27, որոնց խնամելու համար չէր բաւականանում այն
 եկամուտը, որ ստացուում էր, և ահա անձնազոհ մայրապետն
 ընկնում է պարտքի տակ, որի գումարն իր օրով հասնում է
 մինչև 46000 զուրուշի (3680 ռ.): Հիմնադիրն ինչ որ կարող էր
 անել անում էր. անշուշտ կը կամենար նա և այդ պարտքը
 վերացնել մէջտեղից, բայց չկարողացաւ:

Նրա մահից ի վեր անց է կացել 13 տարի, և որբուհիների
 թիւը քանի դնում աւելանում է: Ներկայ մայրապետը՝ Երա-
 նուհի Յովհաննէսեան, արժանաւոր յաջորդն հիմնադրի,
 վերջերս «Սուրհանդակում» հրատարակել է մի նաւահի, որից ե-